ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ 10-1/2022-2023
ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 10.03.2023թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Ն. Համբարձումյանի, Մ. Գալստյանի և Լ. Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով Հանձնաժողովի կողմից Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանի նկատմամբ 2022 թվականի դեկտեմբերի 12-ին հարուցված «Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ» թիվ 10/2022 վարույթի նյութերը,

պարզեց.

1. 2022 թվականի դեկտեմբերի 12-ին Հանձնաժողովը հարուցել է թիվ 10-2022 վարույթը Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ:

2. Հանձնաժողովի կողմից իրականացվել է վարույթի համար հիմք հանդիսացող փաստական հանգամանքների, ինչպես նաև գործում առկա նյութերի ուսումնասիրություն:

Հարուցված վարույթում քննարկվող հարցերի շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի Հանրապետության կառավարությունից՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության Վարչապետի աշխատակազմի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից հայցել «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ին (ԱՆԻՖ) ըստ

կոնկրետ ոլորտների իրականացված (նախատեսված) ներդրումային ծրագրերի իրագործման նպատակով հատկացված միջոցների վերաբերյալ տեղեկատվություն:

«Վարչարարության և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ վարչական վարույթը կարող է երկարաձգվել, եթե փոխօգնության կարգով միջոցներ ձեռնարկելու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը:

3. Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» կետերով նախատեսված դեպքերում վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 օր ժամկետով:

Հաշվի առնելով նշված փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Վարչարարության և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

2022 թվականի դեկտեմբերի 12-ին Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ հարուցված թիվ 10/2022 վարույթի ժամկետը երկարացնել 30 օր ժամկետով՝ մինչև 2023 թվականի ապրիլի 12-ը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**